ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 66 - Ա

«ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԱՊԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Երեխաների պաշտպանության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 136,945,476 դրամ ընդհանուր արժողությամբ «Երեխաների կարճաժամկետ ապաստանում և ճգնաժամային միջամտություն» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Երեխաների պաշտպանության կենտրոն» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հյուսիս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2021 թվականի նոյեմբերի 22-ին կնքված՝ N 4222226 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից

մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրական էներգիայի մատակարարում՝ 3,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի («ՀայՌուսգազարդ» ՓԲԸ) հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ N 013.08.13.0948 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բնական գազի մատակարարում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Էյ-ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2022 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված՝ N Ե-1118 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում՝ 121,476 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02655115) 2017 թվականի նոյեմբերի 2-ին կնքված պայմանագրում (հաշվառման քարտ՝ N 7-14-56) նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի («Վեոն Արմենիա» ՓԲԸ) հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2009 թվականի հունիսի 12-ին կնքված՝ N 114371430 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 96,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Ցուքում» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի նոյեմբերի 27-ին կնքված՝ N 023/27/112012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 700,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2016 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված՝ N 3425591 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 80,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Թամարա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03500525) 2016 թվականի նոյեմբերի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում իր կողմից արտադրված կամ գնված ապրանքների մատակարարում՝ 1,700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Գրանդ Քենդի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02226764) 2016 թվականի ապրիլի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում իր կողմից արտադրվող քաղցրավենիքի և հրուշակեղենի մատակարարում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Էվրի դեյ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09104669) 2019 թվականի հունիսի 26-ին կնքված՝ N J494-19 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում շշալցված ջրի մատակարարում՝ 340,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

11) «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02588296) 2022 թվականի դեկտեմբերի 5-ին կնքված՝ N TLS002/11-20/YVN նամակ-համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցում՝ 408,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

12) «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00433357) 2022 թվականի նոյեմբերի 22-ին կնքված՝ N 39 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած

ժամանակահատվածում աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 560,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

13) «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04718853) 2015 թվականի նոյեմբերի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում համակարգչային տեխնիկայի կամ այլ ապրանքների մատակարարում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

14) «Լատտե» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01257241) 2019 թվականի նոյեմբերի 6-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում մանկական հագուստի, տնտեսական ապրանքների մատակարարում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

15) «Էյչ Էյ Գրուպ» ՍՊԸ-ի («Զիմեգ» ՍՊԸ) հետ (ՀՎՀՀ՝ 01848326) 2018 թվականի նոյեմբերի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում իր կողմից արտադրված կամ գնված ապրանքների մատակարարում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

16) «Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2022 թվականի նոյեմբերի 18-ին կնքված՝ N 18/11/22 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում վառելիքի մատակարարում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

17) «Ջի Ընդ Էյ Մոթորս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01323194) 2022 թվականի նոյեմբերի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և ընթացիկ վերանորոգման ծառայությունների մատուցում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

18) «Էյ-Էմ-Էյչ աուդիտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02246786) 2022 թվականի դեկտեմբերի 6-ին կնքված՝ N ՀԾ/06/22 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցում՝ ամսական 380,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Երեխաների պաշտպանության կենտրոն» հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

02.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ